ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ	
Չի ներկայացվել	
2. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
3. Հայաստանի Հանրապետության ազգաային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
4. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
5. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	

6. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
7. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
8. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պետական–իրավական հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
9. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
10. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
11. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	

12. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
13. Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբ	
Չի ներկայացվել	
14. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
15. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմ	
Չի ներկայացվել	
16. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ	27.06.2023 N 02/08.86/20600-2023
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
17. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակ	
Չի ներկայացվել	

18. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակ	31.07.2023 N /03.39/23208-2023
Ուսումնասիրելով «2024 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), հայտնում ենք հետևյալը. 1. Շինարարության ծավալների ամբողջական գնահատման նպատակով առաջարկում ենք մշակել վիճակագրական հաշվետվության ձև, որով կամփոփվեն հաշվետու ամսում տրված շինարարական թույլտվությունների տեսակները և մակերեսները,	**1. Չի ընդունվել:** ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի դրույթների համաձայն (տես՝https://www.arlis.am/documentview.aspx?docid=106854 հղումը) տվյալ գործառույթը վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին, ուստի և առաջարկը վարչական հաշվառման խնդիր է: Շինարարության թույլտվությունների մասին տեղեկությունները ստացվում են տեղեկանքի տեսքով՝ ռեսպոնդենտների ամբողջականությունն ապահովելու նպատակով:
2. Ավարտված և ընթացքի մեջ գտնվող շինարարության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով առաջարկում ենք մշակել հաշվետվության ձև, որով կհավաքագրվեն ավարտված և ընթացքի մեջ գտնվող շինարարական նախագծերն՝ իրենց տեսակով և մակերեսով,	**2. Չի ընդունվել:** Սույն տեղեկությունը հավաքվում է Ձև 2-ԿՇ (ամսական), (տարեկան) «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ու Ձև 1-ԿՇ (ամսական), (տարեկան) «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին»)

	վիճակագրական հաշվետվությունների ձևերի միջոցով և հրապարակվում «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» և «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածուներում (տե՛ս 2022թ. հրապարակումների https://www.armstat.am/file/doc/99533313.pdf և https://www.armstat.am/file/article/armenia_2022_9.pdf հղումները):
3. Առաջարկում ենք ամփոփ ունենալ կազմակերպությունների հաշվապահական հաշվեկշռի, եկամուտ-վնասների և դրամական հոսքերի հաշվետվությունների վերաբերյալ ամփոփ ստանդարտացված տեղեկատվություն,	**3. Չի ընդունվել:** Կազմակերպությունների հաշվապահական հաշվեկշռի վերաբերյալ տվյալները ստացվում են Ձև 3-Ֆ (տարեկան) վիճակագրական հաշվետվությունների միջոցով՝ տարեկան մեկ անգամ (տարեսկզբի և ավարտի դրությամբ) մնացորդային սկզբունքով, իսկ 1-ՏԳ (տարեկան) վիճակագրական հաշվետվությունների միջոցով՝ կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսերը՝ վերոհիշյալ հաշվետվությունների ձևերի հիման վրա: Ընդ որում, տվյալների հավաքումը վերոհիշյալ հաշվետվությունների ձևերով պարունակում է ընտրանքային մեթոդի գործիքակազմ: Տարեկան մեկ անգամ այդ հետազոտության մեջ ընդգրկվում են 3.5-4.5 հազ. կազմակերպություններ, որոնցից 1000-ից ավելին խոշոր և միջին կազմակերպություններն են: Խոշոր և միջին կազմակերպություններից տվյալները հավաքվում են համատարած, իսկ մնացածից՝ ընտրանքային եղանակով:

	Դրանք ամփոփվում և հրապարակվում են՝ ըստ կազմակերպությունների ծախսերի, դրանց կառուցվածքի, գործունեության տեսակների, կազմակերպությունների արտադրանքի և ակտիվների շահութաբերության, ըստ գործունեության տեսակների և մարզերի: Հրապարակվում են նաև կազմակերպությունների ընթացիկ իրացվելիության գործակիցները, սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակիցը և ինքնաբավության գործակիցն ըստ գործունեության տեսակի (տես՝ «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2022» վիճակագրական ժողովածու, «2.Ոչ ֆինանսական հատվածի կազմակերպությունների ֆինանսներ», էջ 22-44-ը ներառյալ, https://www.armstat.am/am/?nid=82&id=2517 հղմամբ): Տարվա ընթացքում կազմակերպությունների բոլոր դրամական հոսքերի (գործառնությունների) վերաբերյալ տեղեկությունները իրենց մեծ ծավալով պայմանավորված էապես կավելացնեն ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև Արմստատի համար լրացուցիչ ռեսուրսների կարիք կառաջացնեն, հետևաբար արդյունավետության տեսանկյունից առաջարկը դեռևս ընդունելի չէ:
4. Աշխատանքի վիճակագրության տվյալների մասով՝ աշխատանքային հաստիքները կոնսոլիդացնելու նպատակով առաջարկում ենք մշակել հաստիքները կլաստերացնելու ձևաչափ:	**4. Չի ընդունվել:** Աշխատանքի **վիճակագրության շրջանակում,** որպես դիտարկվող միավոր, միջազգայնորեն ընդունված է օգտագործել «զբաղմունքի տեսակ» եզրույթը: Ըստ այդմ,

	խնդրո առարկա տեղեկության դասակարգումը և ապա հրապարակումն ըստ զբաղմունքի տեսակների իրականացվում է, համաձայն Զբաղմունքների Հայաստանի դասակարգչի (այսուհետ՝ դասակարգիչ) (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94900), որը համապատասխանում է Զբաղմունքների միջազգային ISCO-88 դասակարգչին՝ մշակված Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից (այսուհետ՝ ԱՄԿ): Դասակարգչի հիմնական (խոշոր) խմբերը 9-ն են (տե՛ս Աղյուսակ 2, էջ 4), որոնք նպատակից ելնելով՝ ըստ որոշակի ընդհանրությունների, կարող են խմբավորվել /կլաստերացվել: Համապատասխան խմբավորումներ առաջարկված են ԱՄԿ Վիճակագրական դեպարտամենտի կողմից, որում, օրինակ՝ զբաղմունքի տեսակների 6-8-րդ հիմնական խմբերը կլաստերացվում են մեկում (տե՛ս, օրինակ, «Կանայք և տղամարդիկ, 2022» վիճակագրական գրքույկի 76-րդ էջի գծապատկերը՝ https://www.armstat.am/file/article/gender_2022_n.pdf): Ըստ զբաղմունքի տեսակների՝ վիճակագրական տեղեկությունը հրապարակված է «Աշխատանքի շուկան Հայաստանում, 2022» տարեկան ժողովածուում՝ հետևյալ հղմամբ https://www.armstat.am/file/article/lab_market_2022_4.2.pdf, 211-215-րդ էջեր կամ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական տեղեկատվական զեկույցում՝